



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 25 ՆՈՅԵՄԲԵՐ, 2024

## ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈՐՁ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս քու. եւ ողորմեալ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 119

### ՈՂՈՐՄԷ ԵՒ ԿԵԱՆՔ ՏՈՒՐ ԻՆՏԻ

**Ա**մբողջ սրտով կ'աղաղակեմ, պատասխան տուր, Տէր,  
կ'ուզեմ կանոններուդ հետեւիլ:  
Քեզի կ'աղաղակեմ, փրկէ զիս,  
որպէսզի եւ պատուիրաններդ գործադրեմ:  
Ատուտ չեղած՝ կ'արթնամ եւ օգնութիւն կ'աղաղակեմ,  
եւ խօսեմքուդ վստահելով:  
Գիշերն արողջ աչքերս բաց՝  
խօսեմքուդ վրայ կը խորհիմ:  
Լսէ՛ ձայնս, Տէր, ցոյց տալով սէրդ.  
Կեանք տուր ինձի՝ վնիտովդ:  
Ահա կը մօտենան նեղ հալածիչներս,  
որոնք հեռու են Օրէնքէդ:  
Բայց դուն մօտս ես, Տէր,  
եւ եւր բոլոր պատուէրներդ նշմարիտ եմ:  
Պատուիրաններդ նանչնալով, սկիզբէն իսկ հասկցայ,  
թէ բոլոր ժամանակներուն համար հաստատեցիր դուն զանոնք:

### ՇԱՐԱԿԱՆ

**Ա**լիք յանցանաց զիս ալէկոծեն,  
եւ մեղք իմ բազում զիս յանդիմանեն:  
Մեղայքեզ քրիստոս որդի աստուծոյ,  
չնորճեալ զթողութիւն բազում յանցանաց իմոց:

### ԱՂՈՐՁ

Մեր հոգիները դէպի բեզ կը բարձրացնենք, ով Աստուած, որովհետեւ դուն ես մեր լոյսն ու կեանքը. ողորդէ՛ մեր միտքը՝ Քու լոյսովդ, որ կարող ըլլանք Քեզ ներկայացնել աշխարհի մէջ: Կապէ՛ մեր կեանքը Քու կեանքիդ հետ, որ Քեզմէ գորութիւն առնենք եւ այնպէս ապրինք որ մարդիկ մեզ տեսնելով Քու սուրբ անունդ փառաւորենք: Ամէն:

## ՇԱՐԱԿԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾ

*Սուրբ Աստուած, սուրբ եւ հօօր, սուրբ եւ անմահ, որ յայտնեցար վասն մեր, ողորմեա մեզ: (X 3)*

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վրանգից մերոց:

Եւ եւս խաղաղութեան գՏէր աղաչեսցուք: Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեա:

## ՇԱՐԱԿԱՆ-ԱՂՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:*

*Սմենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:*

*Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:*

*Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:*

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

## ՍԱՂՄՈՍ 74

### ԱՂՈԹՔ ԱԶԳԻՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

**Ի**նչո՞ւ համար բոլորովին մեզ լքեցիր, ով Աստուած,  
բարկութեանդ կրակը մինչեւ վերջ կը թափես մեր վրայ,  
որ քու հօտդ եմք:

Յիշէ քու ժողովուրդդ, որ սկիզբէն ընտրեցիր,

եւ փրկեցիր՝ որպէսզի քու սեփական ցեղդ ըլլայ.

յիշէ այս Սիոն լեռը, ուր բնակութիւն հաստատեցիր:

Եկուր, բարձրացիր հիմնայատակ այս փլատակներուն վրայ,

տես թշնամիին գործած աւերը սրբարանիդ մէջ:

Ոստիներդ տանարիդ մէջ պոռչտացին,

իրենց դրօշակները կանգնեցին իբրեւ յաղթութեան նշան:

Քարերը կտրտեցին այնպէս՝ ինչպէս փայտահատները

կացիններով կը կտրեն անտառին ծառերը:

Բոլոր քանդակները փշրեցին կապարներով ու մուրներով.

կրակի տուին սրբարանդ,

կործանեցին ու պղծեցին քու անունիդ կանգնուած տանարը:

Իրենց մտքին մէջ ըսին. – «Բոլորը միասին բշնեմ այստեղէն,

երկրին մէջ լոցեցինք Աստուծոյ բոլոր տօները»:

Իսկ մենք քու ներկայութեանդ նշանները ալ չենք տեսներ,

չկայ մարգարէ, չկայ մէկը որ գիտնայ՝

թէ ասիկա մինչեւ ե՞րբ պիտի տեսէ:

Մինչեւ ե՞րբ հակառակորդը պիտի նախատէ քեզ, ով Աստուած,

մինչեւ ե՞րբ թշնամիին պիտի շարունակէ անարգել քու անունդ:

Ինչո՞ւ բան մը չես ըներ,

ինչո՞ւ գորութիւնդ ցոյց չես տար. ոչնչացուր զանոնք:

**ԱՂՈԹՔ ԱԶԳԻՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ 74:1-11**

Կուգեմ սկսիլ այսօրուան սերպողութիւնը Պօղոս Առաքեալի Կորնթացիներուն ուղղուած առաջին նամակէն հետեւեալ հապուածը մէջբերելով. «Այս բաները պարահեցան՝ իբրեւ օրինակ մեզի, որպէսզի չար բաներու չցանկանք, ինչպէս անոնք ցանկացին» Ա Կորնթ 10:6: Ինչպէս նախորդ Սաղմոսներու պարագային, այսօրուան Սաղմոսն ալ ըսելիք մը ունի մեզմէ իւրաքանչիւրին, անհապապէս կամ ազգովին: Ահա թէ ինչու է որ արձանագրուեցան, ահա թէ ինչու է որ կը սերտենք, ոչ թէ որպէսզի պարզապէս գիտնանք ու իմանանք թէ ինչ պարահեցաւ Դաւիթին, կամ ինչ պարահեցաւ Ասաֆին: Այլ, ինչ որ պարահեցաւ իբրեւ օրինակ մեզի, իբրեւ նշան մեզի, իբրեւ ազդարարութիւն մեզի, իբրեւ պարգամ մեզի, որպէսզի զգուշութեամբ քալենք մեր հաւաքքի կեանքը: Այսօր մեր կեանքը որեւէ մէկ ձեռով փար-բերութիւն մը չունի անցեալի կեանքէն, որուն մասին քանիցս Քրիստոս ինք անդրադարձաւ, Առաքեալները իրենք արձանագրեցին եւ իբրեւ նամակներ ուղարկեցին փարբեր շրջաններու քրիստոնէայ հաւմայններուն, որպէսզի արթուն եւ պարասար ըլլան, Աստուծոյ սպառազինութիւնը իրենց վրայ առած բարի պատերազմը պատերազմելու, որովհետեւ յստակօրէն Առաքեալը կը յիշեցնէ, թէ մեր պատերազմը երեւելի թշնամիին դէմ չէ, այլ աներեւոյթ, որ երեւելի պարկերներով կը յայտնուի, սակայն այն ինչ աքքին հաճելի եւ քիմքին համեղ: Դարձեալ կը կրկնեն, սերպողութիւնները գիտութիւն ամբարելու, այսինչ կամ այնինչ համարը «ինչ կ'ըսելի» համար չեն, այլ՝ մեզ արթուն, պարասար եւ աղօթքի նուիրուելու համար են, որպէսզի չարը առիթը օգտագործելով մեզ չմոլորեցնէ, որ արդէն կ'ապրինք ճիշդ Քրիստոսի խօսքին համաձայն այնպիսի ժամանակներ, ուր սուր ու մոլորեցնող քրիստոսներ, մարգարէներ, քա-րոզիչներ են որ կը վիսրան մեր շուրջ:

Այսօրուան Սաղմոսը 74-րդ Ասաֆի ժողովածուէն է: Անցեալ Սաղմոսը իր մասին էր, իսկ այսօրուանը ամբողջ ազգին համար փրկութեան աղօթք: Ասաֆ որպէս մէկ մասնիկը այդ ազգին, փրկութեան աղօթք է որ կ'ընէ: Միայն ինքզինքին մասին մտածող մը չէ, այլ նաեւ իր ազգին: Չենք կրնար կրաւորա-կան ըլլալ եթէ երբեք մեր ազգը դժուարին վիճակի մէջ է: Չենք կրնար անարարքեր ըլլալ, եթէ նոյնիսկ մեր վիճակը լաւ է, բայց ազգին վիճակը ոչ, մեր պարտականութիւնն է աղօթելու, եթէ նոյնիսկ չենք կրնար բան մը ընել, բայց քոնէ կրնամ ի խորոց սրբի խօսք ընդ Աստուծոյ բարձրացնել: Այս Սաղմոսը ողբ մըն է, որ Ասաֆ կ'արտայայտուի: Ան կը սկսի «Ինչո՞ւ»ով, Ինչո՞ւ համար բոլորովին մեզ լքեցիր, բարկութեանդ կրակը մինչեւ վերջ կը թափես մեր վրայ որ քու հօրդ ենք, ով Աստուած: Ահա Ասաֆի իբրեւ խօսնակը, ներկայացուցիչը կարծէք ազգին կու գայ այս հարցումը հարցնելու, որովհետեւ ոչ թէ այդպէս կը զգայ, այլ՝ որովհետեւ այնպիսի բաներ կը պարահին, որոնք այլ ձեւ չեն բացարձակ, եթէ ոչ, անպայման Աստուած զիրենք լքած պէտք է ըլլայ: Ի՞նչ է պարահաճը, թշնամիին յարձակումը, սրբարանին կործանումը, այրուիլը ու պղծումը: Ամէն անգամ երբ ազգը բարօր, հանգիստ ու խաղաղ կեանք կ'ապրի, ուրեմն Աստուծոյ ներկայութեան ու պաշտպանութեան փակ է, իսկ ամէն անգամ երբ կորուսած, հարուած գայ ազգի գլխուն, ուրեմն Աստուած լքած է զիրենք: Առանց հարցնելու, սակայն, բայց ինչո՞ւ Աստուած լքէ զիրենք: Այս հարցումին պարասիսանը մարգարէական գիրքերը իրենք կու փան. «Անոնք իմ խօսքերուս մտիկ չընելով՝ իրենց նախահայրերուն անօրէնութիւններուն դարձան եւ օտար աստուածներու ետեւէ զացին, որպէսզի անոնց ծառայութիւն ընեն: Իսրայէլի եւ Յուդայի փոխը իրենց հայրերուն հետ ըրած ուխտս աւերեցին: Անոր համար Տէրը այսպէս կ'ըսէ. «Ահա ես այնպիսի չարիք պիտի բերեմ անոնց վրայ, որմէ կարող պիտի չըլլան ազգսիլ: Ինձի պիտի աղաղակեն, բայց անոնց մտիկ պիտի չընեն»»: Երեմիա 11: Այս Սաղմոսը յիշեցում է, թէ ինչպիսի փորձութիւններու մէջով անցնինք Աստուծոյ վստահելու, Աստուծոյ դառնալու, յիշելու, թէ Անիկա հաւաքարիմ է Իր փուած խոստումին, վստահելու թէ Ան պիտի ազգսէ մեզ: Իսկ եթէ կ'անցնինք փորձութիւններու մէջով, որովհետեւ անով Աստուած պարգամ մը ունի մեզի փոխանցելիք: Մենք ընդհանրապէս միայն փորձութիւնները կը փեսնենք, առանց, սակայն, մտա-ծելու եւ անդրադառնալու պարճառին մասին:

Առաջին համարը, կը ներկայացնէ, թէ ինչո՞ւ լքեցիր մեզ բոլորովին, բարկութեանդ կրակը մինչեւ վերջ, հակառակ անոր որ Իր հօրն ենք: Ուրեմն կան պահեր, ուր Աստուած կը լքէ մեզ, բայց փակաւին ոչ ամբողջութեամբ, որոնք զգուշացումներ են, մինչեւ որ հասնի պահը բոլորովին մեզ լքելու, եւ բարկութեան կրակը մինչեւ վերջ թափելու: Այսպէս յիշեցում կ'ընէ, որ մենք քու հօրդ ենք: Բայց չմոռնանք նաեւ Աստուծոյ խօսքը, որ կ'ըսէ. «Դարասարանը իմ փունես պիտի սկսին»։ Ընդհակառակը, եթէ մենք Աստու-ծոյ հօրն ենք, ուրեմն պարտականութիւնը ունինք Հովիւին կամքին համաձայն ապրելու, եւ ոչ թէ ասդին անդին խտրորելու, եւ ինձի համար կեր փնտրելու, մոռնալով, որ

Ինք թալար արօքավայրերու մէջէն կ'անցնէ զիս եւ հոգիս կը նորոգէ, որովհետեւ Տէրը իմ Հովիւս է, ես բանի մը կարօտ պիտի չըլլամ:

Երկրորդ համարով, անցեալի անդրադարձը կ'ընէ, թէ Աստուած Ինք է որ ընտրեց զիրենք եւ փրկեց որպէսզի Իրեն սեփական ժողովուրդը ըլլան, եւ անոնց մէջ բնակի, ուր այդ բնակութեան վայրն ալ Սիոն լեռը ընտրեց: 3-9 համար, բայց հիմա այդ վայրը, եւ այդ վայրին վրայ շինուած սրբարանը փլատակ, թշնամիին դրօշակը դրուած իբրեւ յաղթութեան նշան, քանդակները փշրուած, կործանուած ու պղծուած: Տակաւին, ոչ միայն այսօր, այլ նաեւ թշնամին կը մտածէ ժողովուրդը գերի տանելու մասին, որպէսզի լռեցնեն Աստուծոյ բոլոր փօները, այսինքն՝ փօն չփօնուի: Իսկ ժողովուրդը Աստուծոյ ներկայութեան նշան ալ չի տեսներ, որպէսզի քոնէ անով միտիթարուի, թէ Աստուած հոն է ու պիտի միջամտէ: Կը շարու-նակէ ըսելով, «մարգարէ մըն ալ չկայ, որ քոնէ պատգամէ ըսելով, թէ մինչեւ երբ պիտի տեսնուի այս կացու-թիւնը»: Ահա այս վիճակին մէջ, հարց կու տայ, ինչպէս մենք ալ նոյն հարցը կու տանք, թէ «մինչեւ ե՞րբ հակառակորդը պիտի նախապէ քեզ, մինչեւ ե՞րբ թշնամին պիտի շարունակէ անարգել քու անունդ: Ինչո՞ւ բան մը չես ըներ, եւ ինչո՞ւ գորութիւնդ ցոյց չես տար»: Ուրեմն, Աստուած Իրեն յարուկ մեթօքներով կ'ու-զէ դաստիարակել Իր ժողովուրդը, որպէսզի անոնք դարձի գան, եւ ապաշխարութեամբ Իրեն վերադառնան, խոստովանելով իրենց մեղքը, եւ խնդրելով որ Աստուած յիշէ Իր խոստումը եւ Ուխտը:

**Պահապան ամենայնի Քրիստոս,**  
*աջ ին հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,*  
*ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,*  
*ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.*  
*եւ ողորմեա՛ ին արարածոց եւ ինձ բազմամեղիս:*